ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 31 հուլիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյան
Անդամներ՝ Կ. Բալայան
Վ. Հովհաննիսյան

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Տաթեւիկ Մնացականյանի 2009 թ. հուլիսի 28-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը քննության ընդունելու հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Քաղաքացի Տ. Մնացականյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:
2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 28.07.2009թ., այսինքն՝ պահպանվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված 6-ամսյա ժամկետը:
3. Առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:
4. Դիմողն իրավասու է դիմել ՀՀ սահմանադրական դատարան:
5. Դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին:
6. Դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում:

7. Դիմումի առարկայի վերաբերյալ սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում:

8. Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

9. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումն առնչվում է ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականության հետ, այլ այդ դրույթների կիրառման օրինականության եւ իրավաչափության հետ: Դիմումում ձեւականորեն բարձրացնելով վիճարկվող դրույթների սահմանադրականության հարց՝ դիմողն, ըստ էության, առաջ է քաշում համապատասխան դատական ակտերի օրինականության եւ իրավաչափության խնդիրը, որի գնահատումը սահմանադրական դատարանի իրավասության մեջ չի մտնում եւ չի կարող դառնալ սահմանադրական արդարադատության առարկա:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերով՝ սահմանադրական դատարանի դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքերով «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի ՀՀ Սահմանադրության համապատասխանության վերաբերյալ Տ. Մնացականյանի դիմումի քննության ընդունումը մերժել՝ ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն դատական կազմի որոշումն ընդունվել է Սահմանադրական դատարանի անունից:

ՍԴԴԿՈ-

31 հուլիսի 2009 թ.